ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2008 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3
ԻՐԱՎԱ-ՕՐԵՆՄԴՐԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ.....3
ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2008Թ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ 3
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՃՅՈՒՂԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 3
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԹԵՐՔՆԵՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄ.....5
ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻՆ.....6
ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ 7
ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ 8
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ.....9
ՏԵՍՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ.....9
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԱՐԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ.....10
ԱՆՏԱՌԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ 11
ԱՌԱՋԻԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ 12

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
2008 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության 2008 թվականի գործունեության համար ուղենիշ են հանդիսացել Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության ծրագիրը և գյուղատնտեսության կայուն զարգացման ռազմավարության հիմնական ուղղությունները:

2. Հանրապետության գյուղատնտեսության ճյուղում տնտեսավարողների հետևողական աշխատանքի, Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից վարվող քաղաքականության արդյունքում 2008 թվականին գյուղատնտեսությունում օպերատիվ տվյալներով ապահովվել է 3.2 տոկոս տնտեսական աճ, այդ թվում՝ բուսաբուծության ճյուղում՝ 1.5 իսկ անասնապահությունում՝ 6.4 տոկոս:

ԻՐԱՎԱ-ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

3. Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքներ են իրականացվել ագրարային ոլորտի իրավա-օրենսդրական հիմքերի բարելավման և համալրման ուղղությամբ: 2008 թվականի ընթացքում նախարարության նախաձեռնությամբ ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունվել է 6 օրենքներ, ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել 10 օրենքի նախագծեր: ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել 42 որոշման նախագծեր, որից 28-ը ընդունվել է, 14-ը՝գտնվում է քննարկման փուլում:

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2008Թ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ

4. Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թ. նոյեմբերի 29-ի N1440-Ն և 2008թ. հուլիսի 24-ի N 870-Ն որոշումներով սահմանված Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի գործունեության միջոցառումների ծրագրերով Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության համար նախատեսված համապատասխանաբար 27 և 16 միջոցառումները սահմանված ժամկետում կատարվել են:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՃՅՈՒՂԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Բուսաբուծություն

5. ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալներով հաշվետու տարում հանրապետությունում կատարվել է 302.4 հազ. հա ցանք, անցած տարվա 306.0 հազ. հա-ի դիմաց (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի ցանքատարածությունը

(հազ. հա)

Գյուղատնտեսական մշակաբույսերը	2007թ.	2008թ.	2008թ. 2007թ.-ի նկատմամբ, %
Հացահատիկային և հատիկաընդեղեն մշակաբույսեր	176.213	172.955	98.2
Տեխնիկական մշակաբույսեր	1.616	2.375	147.0
Կարտոֆիլ	31.674	34.286	108.2
Բանջարեղեն	25.607	24.095	94.1
Բոստան	5.884	5.452	92.7
Կերային մշակաբույսեր	64.989	63.23	97.3
Ընդամենը ցանքային տարածությունը	305.983	302.393	98.8
Խաղողի այգի	15.888	16.65*	104.8
Պտղատու այգիներ և հատապտուղ	38.02	38.7*	101.8
Ընդամենը բազմամյա տնկարկներ	53.908	55.35	102.7

*) օպերատիվ տվյալներով

6. ՀՀ գյուղատնտեսության նախարարության օպերատիվ տվյալներով հիմնական բուսաբուծական մթերքների արտադրության ծավալները ներկայացված են 2-րդ աղյուսակում:

Աղյուսակ 2

Գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի համախառն բերքը 2007 և 2008 թվականներին

(հազ. տոննա)

Գյուղատնտեսական մշակաբույսերը	2007թ.	2008թ. (ՀՀ գյուղատնտեսության նախարարության օպերատիվ տվյալներով	2008թ. 2007թ.-ի նկատմամբ, %
Հացահատիկային և հատիկաընդեղեն մշակաբույսեր	452.538	415.0	91.7
Կարտոֆիլ	583.900	648.0	111.0
Բանջարեղեն	845.285	832.4	98.5
Բոստան	206.295	182.2	88.0
Պտուղ և հատապտուղ	260.239	316.7	121.7
Խաղող	218.883	185.0	85.4

7. Հաշվետու տարում շուրջ 1.7 անգամ ավելացել է հանրապետությունից թարմ խաղողի արտահանման ծավալները (2008թ. արտահանվել է 3014.6 տոննա՝ 2008թ-ի 1811 տոննայի դիմաց): 2008թ. հիմնվել է շուրջ 795.5 հա խաղողի և 720.0 հա պտղատու այգի:

Բույսերի պաշտպանություն.

8. Ձեռք է բերվել 8000 կգ ցինկի ֆոսֆիդ տեսակի մկնասպան թունանյութ (31.2 մլն դրամ) և անհատույց բաշխվել համայնքներին՝ իրենց ուժերով պայքարի աշխատանքներ կազմակերպելու համար: Հաշվետու տարվա վերջին թունանյութի մնացորդը կազմել է 1650 կգ, որը կբաշխվի 2009 թվականի գարնանը:

9. Համայնքներում մկնանման կրծողների դեմ պայքար է տարվել շուրջ 104.7 հազ. հա հողատարածության վրա: 2008 թվականին հանրապետության մարզերում մորեխների դեմ պայքարի աշխատանքներ է իրականացվել 5402 հա-ի վրա, որից 4662 հա-ը՝ կենտրոնացված:

10. Հանրապետության անտառներում անտառային վնասատուների և հիվանդությունների դեմ ավիացիոն քիմիական պայքար է իրականացվել 7700 հեկտարի վրա:

Սերմերի որակի գնահատում, սորտափորձարկում և սերմնաբուծություն.

11. 2008թ. ընթացքում լաբորատոր հետազոտությունների է ենթարկվել շուրջ 14100 տոննա գյուղատնտեսական մշակաբույսերի սերմեր:

12. Փորձաքննության են ենթարկվել գյուղատնտեսական 12 մշակաբույսերի (հացահատիկի բանջարեղենի, կարտոֆիլի, բոստանի, կերային մշակաբույսերի, պտղի և խաղողի) 48 նոր սորտեր և հիբրիդներ: Բույսերի նոր սորտերի փորձարկումներ է իրականացվել 13 մշակաբույսերի 157 սորտերի և հիբրիդների գծով:

Անասնաբուծություն և տոհմային գործ

13. Հանրապետությունում անասնագլխաքանակի աճման վերջին տարիների միտումները շարունակվեցին նաև 2008 թվականին:

Աղյուսակ 3

Գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակը
(տարեվերջի դրությամբ)

(հազ. գլուխ)

Գյուղատնտեսական կենդանիներ	2007թ.	2008թ. (ՀՀ գյուղատնտեսության նախարարության օպերատիվ տվյալներով)	2008թ. 2007թ-ի նկատմամբ, %
Խոշոր եղջերավոր անասուններ	629.1	645.0	102.5
այդ թվում՝ կովեր	310.6	313.0	100.8
Խոզեր	86.7	93.0	107.3
Ոչխարներ և այծեր	637.1	654.0	102.7
Թռչուններ	4018.2	4100.0	102.0

14. Համաձայն օպերատիվ տվյալների, 2008թ-ին, նախորդ տարվա համեմատությամբ, ավելացել են անասնաբուծական հիմնական մթերքների արտադրության ծավալները (աղյուսակ 4):

Աղյուսակ 4

Անասնաբուծական մթերքների արտադրությունը 2007-2008 թվականներին

	2007թ.	2008թ. (ՀՀ գյուղատնտեսության նախարարության օպերատիվ տվյալներով)	2007թ. 2008թ-ի նկատմամբ, %
Միս (կենդանի քաշով), հազ. տոննա	122.2	127.9	104.7
Կաթ, հազ. տոննա	642.0	664.0	103.4
Ձու, մլն հատ	525.4	579.0	110.2

15. Թեև հաշվետու տարում նկատվել է նաև գյուղատնտեսական կենդանիների և թռչունների մթերատվության որոշակի աճ, այնուամենայնիվ, բացառությամբ հավերի ձվատվության, մնացած ցուցանիշները դեռևս հեռու են բավարար լինելուց, քանի որ մեկ կովի միջին կաթնատվությունը շարունակում է մնալ 2000 կգ-ից ցածր, իսկ սպանդի ենթարկված բտված տավարի միջին սպանդային զանգվածը՝ 283 կգ, ինչը 1,5 անգամ զիջում է նույնիսկ անասնաբուծության զարգացման միջին մակարդակ ունեցող երկրների ցուցանիշներին:

16. 2008 թվականին նախարարության նախաձեռնությամբ Ավստրիայի լավագույն բուծարաններից Հայաստան ներկրվեց 614 գլուխ շվից, հոլշտինյան և սիմենթալ ցեղերի տոհմային երինջներ, ինչը ավելի քան 3 անգամ գերազանցում է 2007 թ-ին ներկրված գլխաքանակի ցուցանիշը: Արդեն ստացվել են բարձր տոհմային և մթերատու հատկանիշներով օժտված շուրջ 400 բարձրարժեք տոհմային հորթեր, իսկ ներկրված մեկ կենդանու լակտացիայի ընթացքում ստացվել է ավելի քան 5,0 հազար կգ կաթ, ինչը 2-2,5 անգամ գերազանցում է հանրապետությունում ձևավորված համապատասխան ցուցանիշին:

17. 2008 թվականին առաջին անգամ մեր երկրում աճեցված տոհմային խոզամայրերից 55 գլուխ վաճառվել է Վրաստանի Հանրապետությանը: Պայմանավորվածություն է ձեռք բերվել 2009 թվականին վաճառել ևս 250 գլուխ տոհմային խոզամայրեր:

18. Նախորդ տարում հանրապետության բոլոր մարզերի 300-ից ավելի անասնապահությամբ զբաղվող տնտեսություններում իրականացվել է շուրջ 20 հազար կովերի և 3,4 հազար խոզամայրերի արհեստական սերմնավորում:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԹԵՐՔՆԵՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄ

19. Գյուղատնտեսական մթերքների արտահանման աջակցության նպատակով հաշվետու տարում ստեղծվել է միջգերատեսչական հանձնաժողով, ինչպես նաև

հանրապետությունում բերքահավաքի գործընթացում ծագած արտակարգ իրավիճակներին, գյուղմթերքների գնումների ընթացքում առաջացած խնդիրներին արագ արձագանքման նպատակով նախարարությունում գործել է շուրջօրյա թեժ գիծ և հերթապահություն:

20. ՀՀ գյուղատնտեսության նախարարության և վերամշակող կազմակերպությունների համատեղ ջանքերի շնորհիվ պտղի, բանջարեղենի և խաղողի գնումներն ընթացան սահուն և առանց լուրջ դժվարությունների: Ընդհանուր առմամբ մթերվեց և վերամշակվեց շուրջ 23.0 մլրդ դրամի 195.8 հազար տոննա պտուղբանջարեղեն և խաղող (գծապատկեր 1):



Գծապատկեր 1.

21. Հաշվետու տարվա մթերումների ընթացքում նկատելի էր մթերող ընկերությունների կողմից մթերվող խաղողի, պտղի և բանջարեղենի, հատկապես լոլիկի նկատմամբ պահանջարկի բարձրացում, որը հանգեցրեց մրցակցության առաջացման և արդյունքում նախորդ տարվա համեմատությամբ բարձրացան մթերման միջին գները: Մասնավորապես՝ լոլիկի 1կգ-ի գնման միջին գինը կազմեց 32.4 դրամ, նախորդ տարվա 25.2 դրամի դիմաց, խաղողինը՝ 141.6 դրամ՝ 139.9 դրամի դիմաց: Բանջարեղենի գնումների ծավալների կրճատումը հետևանք է նաև 2007 թվականին մթերված լոլիկի դիմաց վճարումների ուշացման, ինչպես նաև մթերման ցածր գների: Իսկ խաղողի գնումների որոշակի նվազումը պայմանավորված է հաշվետու տարում արտադրության ծավալների որոշ չափով կրճատմամբ:

22. Խաղողագործության ճյուղի զարգացումը առաջիկայում խնդիր է դնում խաղող վերամշակող ընկերությունների կարողությունների հզորացման և նորերի ստեղծման ուղղությամբ:

23. Հաշվետու տարում Ագրոբիզնեսի զարգացման կենտրոնի հետ համատեղ կազմակերպվել է «Արմպրոդէքսպո-2008» ութերորդ միջազգային ցուցահանդեսը:

ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻՆ

24. 2008 թվականի «Պետական աջակցություն գյուղատնտեսական հողօգտագործողներին» ծրագրով մինչև 7.0 հա մշակովի հողատարածության յուրաքանչյուր հեկտարի հաշվով տրամադրվել է 35.0 հազ. դրամ աջակցություն: Ծրագրում ընդգրկվել է 8 մարզ՝ 16 նախկին վարչական շրջան՝ 251 համայնք:

25. Նախարարություն ներկայացված շահառուների հայտերի ուսումնասիրությու-

նից և փաստաթղթերը ճշգրտելուց հետո 2008թ. պայմանագրեր են կնքվել 28.1 հազ. շահառուների հետ, ընդգրկելով 49.9 հազ. հա հողատարածք՝ 1564.5 մլն դրամ գումարով:

26. Կատարված ուսումնասիրությունները և հաշվարկները հնարավորություն են տվել նախապես գնահատել գյուղատնտեսական հողօգտագործողներին պետական աջակցության ծրագրի արդյունավետությունը: Մասնավորապես, հիմնական օժանդակություն ստացած մարզերի նախկին վարչական շրջաններում մշակաբույսերի տարածքները 2008թ. գերազանցել են նախորդ տարվա մակարդակը 8.5%-ով՝ ցանքատարածությունների աճը կազմել է 5910 հա:

27. Համաձայն կատարված հաշվարկների նշված նախկին վարչական շրջաններում կանխատեսվել է պետական աջակցություն ստացած մշակաբույսերի համախառն արտադրանքի աճ՝ 9.0 %-ով, որի արժեքային արտահայտությունը (համախառն արտադրանքի հավելաճ) կազմում է 2450.4 մլն դրամ, ինչը գերազանցում է պետական աջակցության 1564,5 մլն դրամ գումարը՝ 56.6 %-ով: Նշվածից բացի շահառուների մոտ նկատվում է զգալի ակտիվություն փաստաթղթերի օրինականացման և ձևակերպման գործընթացում, ինչպես նաև մշակության ագրոտեխնիկայի որոշակի բարելավման ուղղությամբ:

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

Արտադրատեխնիկական սպասարկումներ

28. Հաշվետու ժամանակաշրջանում նյութատեխնիկական մատակարարումների և արտադրատեխնիկական սպասարկումների բնագավառում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- շարունակվել է Ճապոնիայի կառավարության Զարգացմանն ուղղված Պաշտոնական Օգնություն {ODA} «Դրամաշնորհային աջակցություն սակավապահով ֆերմերներին» ծրագրի իրականացման գործընթացը: Նախապատրաստվել և Ճապոնական կողմին է հանձնվել 2009-2010թթ. դրամաշնորհային ծրագիրը շարունակելու համար պահանջվող անհրաժեշտ դիմում-հայտը,
- կազմակերպվել են Ճապոնիայի կառավարության 170 մլն իեն (1.59 մլն ԱՄՆ դոլար) և ՉԺՀ-ի կառավարության 13 մլն յուան (1.62 մլն ԱՄՆ դոլար) ծավալով դրամաշնորհների հաշվին ներկրված գյուղատնտեսական տեխնիկայի ստացման աշխատանքները: Նշված ծրագրերով համապատասխանաբար ներկրվել են 29 տրակտոր և 5 հացահատիկահավաք կոմբայն (ճապոնական) և 50 տրակտոր, 1 հատիկաընդեղենի ու 1 եգիպտացորենի կոմբայն (չինական):

Գյուղատնտեսության մելիորացիա

29. Գյուղատնտեսական նշանակության հողերի բարելավման ու պահպանման ուղղությամբ իրականացվել են հետևյալ ծրագրերը.

Բնական կերհանդակների (արոտների) բարելավում և ջրարբիացում.

30. Իրականացվել են Գեղարքունիքի մարզում՝ Սպիտակասարի (II փուլ) և Կարճաղբյուրի, Արագածոտնի մարզում՝ Վարդենուտի, Լոռու մարզում՝ Բազում-Սևաբերդի և Տավուշի մարզում՝ Գիժսար-Նոյեմբերյանի ջրարբիացման համակարգերի վերականգնման աշխատանքները: Ծրագրի իրականացմամբ վերականգնվել են ջրարբիացման 5 համակարգերի 17.0 կմ ընդհանուր երկարության վթարված հատվածներ, արդյունքում օգտագործելի են դարձել շուրջ 20 հազ. հա արոտներ:

Գյուղատնտեսական հողատեսքերի պահպանում, բարելավում և ինժենեռական կառուցվածքների վերականգնում.

31. Իրականացվել են Նարեկ-2 ջրհան կայանի և մղման խողովակաշարի վերականգնման, Մարտունի, Վանաձոր և Դեբեդ գետերի, Կարճաղբյուրի հեղեղատարի շուրջ 10 կմ ընդհանուր երկարությամբ հուների մաքրման և ափերի ամրացման, Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ համայնքի 120 հա ոռոգելի հողերի ջրապահովվածության բարձրացման, Լոռու մարզի Սարչապետի ջրարբիացման համակարգի վերականգնման և 125 հա ոռոգելի հողերի ջրապահովվածության բարձրացման աշխատանքները:

Ճապոնիայի կառավարության «Պարենային արտադրության աճ» ծրագրի շրջանակներում ձևավորված գործընկերային ֆոնդի հաշվին հակահեղեղային միջոցառումներ.

32. Իրականացվել են Հրազդան, Աղստև և Մարմարիկ գետերի ավելի քան 8 կմ երկարությամբ հատվածում հուների մաքրման և ափերի ամրացման աշխատանքները: Արդյունքում առափնյա գյուղատնտեսական նշանակության հողատարածքը, շենք-շինությունները, ինժեներական կառուցվածքները զերծ կմնան ջրածածկումից, ողողումներից:

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Գիտության ոլորտ

33. 2008 թվականին նախարարության համակարգի 7 գիտական կազմակերպություններում կատարվել է պետական բյուջեից ֆինանսավորվող 29 պայմանագրային (թեմատիկ) թեմա և 10 բազային ծրագիր: Մասնավորապես գիտական կենտրոնների կողմից կատարված աշխատանքներից կարելի է առանձնացնել հետևյալը.

34.Փորձարկվել են աշնանացան ցորենի 950, աշնանացան գարու 720 և այլ մշակաբույսերի 276 սորտանմուշներ: Շրջանացվել են աշնանացան ցորենի 3, սիսեռի 4 և սոյայի 2 սորտեր:

35. Բանջարաբոստանային հիմնական մշակաբույսերի նոր մրցունակ հիբրիդների և սորտերի ստացման նպատակով հետազոտվել է 525 սորտանմուշ, պետական փորձարկման է ներկայացվել 20 նոր հեռանկարային սորտեր և հիբրիդներ, կատարվել են գենոֆոնդի մեջ ընդգրկված 198 սորտերի սորտաթարմացման աշխատանքներ: Ուսումասիրվել և գնահատվել են նաև Բանջարաբուծության միջազգային կենտրոնի համաշխարհային հավաքածուից ստացված 178 տարբեր սորտանմուշներ:

36. Շարունակվել են աշխատանքները խաղողի և պտղատու մշակաբույսերի սելեկցիայի ու բարձրարժեք սորտերի ստեղծման ուղղությամբ: Մշակվել են խաղողի նոր սելեկցիոն մուսկատային սորտերից աղանդերային գինիների պատրաստման նոր տեխնոլոգիաներ:

37. Մշակվել է էրոզացված և էրոզավտանգ տարածքների համար հակաէրոզիոն միջոցառումների տեխնոլոգիաներ, ինչպես նաև հողերի բերրիության պահպանման, երկրորդային աղակալումը կանխելու մելիորատիվ միջոցառումների համալիր:

38. Աշխատանքներ են տարվել հյուսվածքային կուլտուրայով արժեքավոր գյուղատնտեսական և դեկորատիվ մշակաբույսերի առողջ տնկանյութի ստացման և արագ բազմացման տեխնոլոգիաների մշակման և ներդրման ուղղությամբ: Ագրոկենսատեխնոլոգիայի գիտական կենտրոնում ստեղծվել է բույսերի գենետիկական պաշարների բանկ, որտեղ ներկայումս պահպանվում են շուրջ 2000 սորտերի սերմերի նմուշներ:

39. Աշխատանքներ են տարվել հանրապետությունում բուծվող գյուղատնտեսական կենդանիների և թռչունների ցեղերի տոհմամթերատու հատկանիշների կատարելագործման, կերակրման խնամքի ու պահվածքի տեխնոլոգիաների մշակման և կերարտադրության արդյունավետության բարձրացման ուղղությամբ: Մշակվել և ներդրման է առաջարկվել գյուղատնտեսական կենդանիների վիրուսային վարակիչ հիվանդությունների կանխարգելման տեխնոլոգիա՝ նոր իմունախթանիչի կիրառմամբ:

40. Ընդհանուր առմամբ ընթացիկ տարում գիտական կենտրոնների փորձարարական բազաներում արտադրվել է մոտ 510 տոննա աշնանացան ցորեն, այդ թվում՝ 215 տոննա սուպեր էլիտա, էլիտա և առաջին վերարտադրության սերմացու, բանջարաբոստանային մշակաբույսերի մոտ 700 հազար հատ սածիլ և 300 կգ սերմ:

Խորհրդատվական ոլորտ

41. Գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնների (ԳԱՄԿ) և Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոնի (ԳԱՀԿ) կողմից անմիջապես ֆերմերային տնտեսություններում իրականացվել է «Ագրարային

տեխնոլոգիաների գնահատման» 40 ծրագիր: Տեղեկատվության և առաջավոր փորձի տարածման նպատակով տպագրվել են 30 անվանումով շուրջ 20 հազար տպաքանակով խորհրդատվական թերթիկներ, որոնք բաժանվել են ֆերմերային տնտեսություններին:

42. Հրատարակվել է «Ագրոլրատու» թերթի 33 համարներ՝ շուրջ 1700 տպաքանակով: Նախապատրաստվել են 110 հեռուստահաղորդումներ, որոնք հեռարձակվել են «Կենտրոն», «Համասփյուռ» հեռուստաալիքներով և մարզային 12 ալիքներով: ԳԱՄԿ-երի կողմից 916 համայնքներում իրականացվել է մոտ 30 հազար խորհրդատվություն, անցկացվել են 2200 սեմինարներ, որոնց մասնակցել է մոտ 41 հազար մարդ, տպագրվել են 3200 տպաքանակով խորհրդատվական գրքույկներ, իրականացվել են նաև շուրջ 2000 մարքեթինգային միջոցառումներ:

Կրթության ոլորտ

43. 2008-2009 ուսումնական տարում առկա՝ անվճար և վճարովի ուսուցմամբ ՀՀ գյուղատնտեսության նախարարության քոլեջներ են ընդունվել 980, իսկ հեռակա ուսուցմամբ 137 դիմորդ: Ներկայումս գյուղատնտեսական քոլեջներում սովորում են ընդամենը 3096 ուսանող, որից միջին մասնագիտական կրթությամբ 2862 (առկա և հեռակա ուսուցմամբ) և նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթությամբ՝ 234 ուսանող:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

44. Միջազգային կազմակերպություններին անդամակցության շրջանակներում շարունակվել է համագործակցությունը ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (FAO), Համաշխարհային Բանկի (WB), Գյուղատնտեսության Զարգացման Միջազգային Հիմնադրամի (IFAD), OPEC Միջազգային զարգացման հիմնադրամի, Կենդանիների առողջության միջազգային կազմակերպության (OIE) և ԱՊՀ Ագրոպարենային հարցերով միջկառավարական խորհրդի հետ, որի արդյունքում մշակվել և գործնականորեն իրականացվել են տնտեսության ագրարային հատվածի զարգացմանը նպաստող ծրագրեր:

45. Նախարարությունը աջակցել է հանրապետությունում ագրովերամշակման բնագավառի տնտեսվարող սուբյեկտներին Հայաստանում և արտասահմանում կազմակերպվող միջազգային ցուցահանդեսներին մասնակցելու համար:

ՏԵՍՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Սննդամթերքի անվտանգության և անասնաբուժական տեսչական գործունեություն

Անասնաբուժություն

46. 2008 թվականի ընթացքում կատարվել են 10.543 մլն հակահամաճարակային միջոցառումներ՝ նախատեսվածի 101.5 %-ը:

47. Հանրապետությունում որոշակի խնդիր է առկա խոշոր և մանր եղջերավոր կենդանիների բրուցելյոզ հիվանդության հետ: Խնդրի լուծման նպատակով ՄԱԿ-ի ՊԳԿ և ՀՀ կառավարության համաձայնությամբ Սյունիքի մարզում իրականացվում է «1-ին փուլի Աջակցություն Հայաստանում բրուցելյոզի վերահսկողություն» պիլոտային ծրագիրը:

48. Նշված ժամանակաշրջանում հանրապետությունում չեն արձանագրվել կենդանիների վտանգավոր վարակիչ հիվանդություններ, բացառությամբ խոզերի աֆրիկական ժանտախտ հիվանդության եզակի դեպքերից (հունվար-մայիս ամիսներ):

Սննդամթերքի անվտանգություն

49. Հաշվետու տարում իրականացվել է 1652 տնտեսավարող սուբյեկտների սննդամթերքի անվտանգության պահանջների պահպանման գործունեության ստուգում: Տուգանքների ընդհանուր գումարը կազմել է 75.79 մլն դրամ: 2007թ. նույն ժամանակահատվածում իրականացվել է 1417 տնտեսավարող սուբյեկտների

գործունեության ստուգում, տուգանքների ընդհանուր գումարը՝ 68.17 մլն դրամ:
50. Ամռան ամիսներին հատկապես մեծ ուշադրություն է դարձվել արագ փչացող սննդամթերքների արտադրությանը և իրացմանը: Այդ նպատակով ստուգումների գերակշիռ մասը կատարվել է բացօթյա հանրային սննդի օբյեկտներում, կենդանական ծագման մթերքների իրացման կետերում, այդ թվում գյուղատնտեսական շուկաների տարածքներում գործող մսի վաճառքի կետերում, ինչպես նաև պաղպաղակի արտադրության և իրացման օբյեկտներում: Մի շարք մսի վաճառքի կետերում ստուգումների արդյունքում կասեցվել է մսի իրացումը: Պաղպաղակի արտադրություններում նույնպես կատարվել են իրացման կասեցումներ, որոնք հանվել են թերությունները վերացնելուց հետո:
51. Հունաստանի կառավարությունը Հայաստանի Հանրապետության Գյուղատնտեսության նախարարության «Հանրապետական անասնաբուժական հակահամաճարակային ախտորոշիչ կենտրոն» ՊՈԱԿ-ի հզորացման նպատակով իրականացրել է «Սննդի անվտանգության և գյուղատնտեսության համակարգի զարգացման» ծրագիրը: Այդ նպատակով իրականացվել է 220.0 հազ. եվրո ներդրում՝ սննդում պեստիցիդների որոշման լաբորատորիայի ստեղծման համար, և 150.0 հազ. եվրո է ներդրվելու հյութերում և հեղուկներում ծանր մետաղների և նիտրատների որոշման համար: Առաջին փուլով կատարվել է պեստիցիդների լաբորատոր սարքերի գնումը և տեղադրումը: Լաբորատորիայի սարքավորումները համապատասխանում են եվրոպական ստանդարտներին և պահանջներին:

Բույսերի կարանտինի և երկրագործության պետական տեսչություն

52. Հաշվետու տարվա ընթացքում բույսերի կարանտինի սահմանային հսկիչ կետերում բույսերի, բուսական արտադրանքի և կարգավորվող առարկաների ներմուծման, արտահանման, վերաարտահանման նպատակով ֆիզիկական և իրավաբանական անձանց տրամադրվել է 14100 հատ բուսասանիտարական հավաստագիր: Նախարարի 90 հանձնարարագրերով ստուգվել է բույսերի պաշտպանության միջոցներ իրացնող 78 գործող սուբյեկտներ և 17 հայտնաբերված խախտումների դեպքերով նշանակվել է 1 մլն 850 հազար դրամի չափով տուգանք: Մարզային ստորաբաժանումների տեսուչների կողմից իրականացվել է 1566 տեսչական ստուգայցեր:
53. Կատարվել է թունաքիմիկատների իրացումով զբաղվող սուբյեկտների 880 ստուգայց, վերցվել և թունաբանական լաբորատորիա է ուղարկվել 520 նմուշ: Կարանտին վնասակար օրգանիզմներ հայտնաբերելու նպատակով հանրապետության բոլոր մարզերում իրականացվել է մոնիթորինգ:

Գյուղատնտեսական տեխնիկայի տեսչություն

54. Հաշվետու ժամանակաշրջանում գյուղատնտեսական տեխնիկայի պետական տեսչության կողմից պետական բյուջե է մուտքագրվել շուրջ 19.3 մլն դրամ պետական տուրք՝ նախատեսված 17,4 մլն դրամի դիմաց: Իրականացվել են ՀՀ-ում գրանցված և շահագործվող մեխանիզմներից վնասակար նյութերի արտանետման համար բնապահպանական վճարների վերահսկողություն և պետական բյուջե է մուտքագրվել շուրջ 28 մլն դրամ՝ նախատեսված 27,5 մլն դրամի դիմաց:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԱՐԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

I. Գյուղական ձեռնարկությունների և փոքրածավալ առևտրային գյուղատնտեսության զարգացման ծրագիր

55. 2008թ. բյուջեով նախատեսված էր կատարել աշխատանքներ՝ 10784.2 հազ. ԱՄՆ դոլարի: 2008 թվականին իրականացվել է 12742.1 հազ. ԱՄՆ դոլար ծավալով աշխատանք:
56. 2008թ. նախատեսված էր իրականացնել 2941.2 հազ. ԱՄՆ դոլարին համարժեք վարկերի տրամադրում: Երեք մասնակից ֆինանսական կառույցների կողմից

տրամադրվել են 46 երկարաժամկետ և 1 կարճաժամկետ ենթավարկեր՝ 2705.0 հազ. ԱՄՆ դոլար ընդհանուր գումարով:
57. Մրցակցային դրամաշնորհների տրամադրման բաղադրիչով 2008թ. մրցակցային դրամաշնորհների IV փուլի մրցույթի արդյունքում կնքվել է 15 պայմանագիր՝ 252.4 հազ. ԱՄՆ դոլար արժողությամբ, իսկ V փուլի արդյունքում՝ 18 պայմանագիր 295.3 ԱՄՆ դոլար արժողությամբ: Միաժամանակ 2008թ ընթացքում շարունակվել է I, II և III փուլերի մրցույթների ընթացքում կնքված 21 պայմանագրերի իրականացումը: 2008թ. սեպտեմբերի 26-ին տեղի է ունեցել Հայաստանում իրականացվող մրցակցային դրամաշնորհային ծրագրերի I համաժողովը:
58. Համայնքների տնտեսական զարգացման բաղադրիչով 2008թ. նախատեսվել էր իրականացնել 5188.6 հազ. ԱՄՆ դոլարի աշխատանքներ: Հաշվետու ժամանակահատվածի ընթացքում կատարվել են 5442.2 հազ. ԱՄՆ դոլարի աշխատանքներ: Աշխատանքները կատարվել են ՀՀ 6 մարզերում (Լոռի, Շիրակ, Արագածոտն, Տավուշ, Սյունիք, Գեղարքունիք) և ընդգրկում են 134 համայնք:

II. Գյուղական տարածքների տնտեսական զարգացման և արտադրական ենթակառուցվածքների վերականգնման ծրագիր

59. Ծրագրով 11 համայքներում իրականացվում են ենթակառուցվածքների վերականգնման նոր ծրագրեր 687.7 մլն դրամ ընդհանուր արժեքով, այդ թվում 4 համայքներում՝ ոռոգման ու խմելու ջրի ցանցերի կապիտալ նորոգումներ, իսկ 7 համայքներում՝ գազաֆիկացման աշխատանքներ: Փաստացի 2008թ. ընթացքում կատարվել են 317.8 մլն դրամի աշխատանքներ:
60. 51 համայքներում շարունակվել են նաև նախօրոք սկսված աշխատանքների իրականացումը՝ 18 համայնքներում ոռոգման ու խմելու ջրի ցանցերի հիմնական նորոգումներ և ջրարբիացում, 30 համայքներում՝ գազաֆիկացում, 3 համայքներում՝ միջհամայքային և համայքային ավտոճանապարհների վերանորոգում և ասֆալտապատում: Փաստացի 2008թ. ընթացքում կատարվել են 1347.0 մլն դրամի աշխատանքներ:
61. 2008 թվականին ծրագրի վերլուծության և կառավարման գրասենյակի կողմից տարված աշխատանքների շնորհիվ 2008 թվականին Հայաստանի Հանրապետության և ԳՋՄՀ-ի միջև ստորագրվել է Շուկայավարման հնարավորություն ֆերմերներին նոր վարկային և դրանաշնորհային ծրագրի ֆինանսավորման համաձայնագիրը (շուրջ 12.5 մլն ԱՄՆ դոլար), իսկ դեկտեմբերի 23-ին ՕՊԵԿ միջազգային զարգացման հիմնադրամի խորհրդի կողմից հաստատվել է Շուկայավարման հնարավորություն ֆերմերներին ծրագրի սոցիալական ենթակառուցվածքների վերականգնում ենթաբաղադրիչին 14.0 մլն ԱՄՆ դոլարի համաֆինանսավորման ՀՀ կառավարության հայտը:

ԱՆՏԱՌԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

62. 2008թ. իրականացվել է անտառվերականգնման և անտառապատման աշխատանքներ 6821.0 հա տարածքի վրա, այդ թվում անտառմշակույթների ցանքս և տնկում 172.0 հա, անտառի բնաշիվային վերաճին օժանդակում 1700.0 հա, անտառի բնական վերաճին օժանդակում հանքայնացման միջոցով 940.0 հա և անտառի բնական վերաճին օժանդակում ցանկապատման միջոցով 4000.0 հա: Ցանկապատի ընդհանուր երկարությունը կազմում է 80 կմ: Հիմնադրվել է տնկարան և դպրոց հողամաս 9.0 հա ընդհանուր տարածքի վրա:
63. Ճապոնիայի կառավարության «Պարենային արտադրության աճ» ծրագրի շրջանակներում ձևավորված գործընկերային ֆոնդի և այլ ծրագրերի շրջանակներում հանրապետության մի շարք մարզերում, ինչպես նաև Երևան քաղաքում կատարվել է անտառապատում 245.8 հա ընդանուր տարածքի վրա: Վերը նշված ծրագրի շրջանակներում իրականացվել է 41.35 կմ ցանկապատի կառուցում անտառապատված տարածքները պահպանելու նպատակով:
64. 2008թ. հունվարի 1-ից մինչև նոյեմբերի 30-ը «Անտառտնտեսություն» մասնա-

ճյուղերի կողմից կազմվել են 184 անտառխախտման արձանագրություններ: Կազմված բոլոր արձանագրություններից 144-ը ուղարկվել են մարզային բնապահպանական պետական տեսչություններ, իսկ 40-ը՝ ոստիկանության տարածքային բաժիններ:

65. Հաշվետու տարում շուրջ 7700 հա անտառածածկ տարածքի վրա իրականացվել են ավիաքիմիական պայքարի աշխատանքներ տերևակեր վնասատուների (ոսկետուտ, երկրաչափ) և կաղնու ալրացող հիվանդության դեմ, որը տվել է բարձր արդյունք:

66. Ընդհանուր առմամբ ՀՀ գյուղատնտեսության նախարարության 2008թ. գործունեությունը ընթացիկ տարում նպատակաուղղված է եղել ոլորտի գերակա ուղղություններին համապատասխան աշխատանքների իրականացմանը, ընթացիկ հիմնախնդիրների լուծմանը և համակարգում բարեփոխումների խորացմանը:

ԱՌԱՋԻԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ

67. Գյուղատնտեսության բնագավառում առաջիկա առաջնահերթ խնդիրներ են համարվում.

- գյուղատնտեսական մշակաբույսերի առաջնային սերմնաբուծության զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծումը,
- տոհմային անասնապահության զարգացման հնարավորությունների ստեղծումը,
- պարենային ինքնաբավության մակարդակի բարձրացումը, առաջնահերթ անհրաժեշտ պարենամթերքի ներմուծման փոխարինման նախադրյալների ստեղծումը,
- գյուղտնտեսությունում տնտեսավարողների հասցեական պետական աջակցության նպատակային քաղաքականության իրականացումը,
- գյուղատնտեսական մթերքների վերամշակող արդյունաբերության մրցակցային պայմանների բարելավումը և կարողությունների հզորացումը,
- գյուղատնտեսական արտադրանքների իրացման ենթակառուցվածքների զարգացումը,
- գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկումների գործընթացի համակարգված կազմակերպման նախադրյալների ստեղծումը,
- սննդամթերքի անվտանգության միջազգային չափանիշների ապահովման նպատակով լաբորատոր կարողությունների հզորացումը և սննդամթերքի անվտանքության համակարգի զարգացումը,
- վարկերի մատչելիության բարձրացումը,
- խորհրդատվական համակարգի կարողությունների հզորացումը և ծառայությունների բարելավումը: